

ԽՕՍՔ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Լիոն

Գերաշնորհ բարեջան սրբազան հայրեր, հոգեշնորհ և արժանապատիւ ուխտապահ հոգևոր հավիներ,

Հոգեպէս մխիթարուած, ձեզի բոլորիդ կը բերենք Աստուծոյ կենարար օրհնութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն և Մեր հայրական սիրոյ ողջոյնը սրտագին մաղթանքով, որ Սուրբ Հոգւոյ ներշնչմամբ քննարկէք ձեր առաջ դրուած հարցերը, յառաւել շինութիւն ձեր հաւատացեալներու հոգևոր կեանքին և յառաւել պտղաւորում ձեր եկեղեցաշէն գործունէութեան:

Այո, մխիթարուած սրտով է որ ձեզի կը բերենք Մեր այս մաղթանքները, որովհետև կ'ուզենք հաւատալ թէ ձեր սոյն հաւաքոյթը սկզբնաւորում մը պիտի հանդիսանայ՝ յետ այսու ձեր առաւել համերաշխ ու նպատակասլաց գործակցութեան, Արևմտեան Եւրոպայի հայրապետական Պատուիրակութեան ընդհանուր փոխանորդ սրբազան Հօր հետ:

Մեր իղձն է որ ձեր համատեղ բարեջան ճիգերով, Հայ Առաքելական Եկեղեցին Արևմտեան Եւրոպայի տարածքի վրայ հետզհետէ ձևաւորէ իր կազմակերպական կառոյցը, ձեր Եկեղեցւոյ կանոնական և ժողովրդավարական սկզբունքներու հիման վրա, ընդհանուր կեդրոն ունենալով Ֆրանսայի մայրաքաղաքը, իբրև կեդրոն թեմական կազմակերպութեան Ֆրանսայի և Արևմտեան Եւրոպայի հայ եկեղեցական շրջաններու:

Մեր յորդորն է նաև ձեզի հոգևորականներուդ, որ եկեղեցական-վարչական մարմիններուն հետ միասնական աշխատակցութեամբ, զարկ տրուի ձեր համայնքներու ծոցին մէջ՝ կրթական և մշակութային գործունէութեան, ի մասնաւորի ի խնդիր Ֆրանսայի նոր սերունդներու կրօնական, բարոյական ու ազգային դաստիարակութեան:

Սրտանց լիակատար յաջողութիւն կը մաղթենք ձեզի ամենուդ: Տէրը թող զօրացնէ ձեր հաւատքը, աճեցնէ ձեր բարի եռանդը, լուսաւորէ ձեր կեանքի ճանապարհը և մնայ ձեզի միշտ օգնական ու մարտակից:

«Հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լինի» (Ա Կորնթ. ԺԶ 13—14): Ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
14 ապրիլ 1987 թ.